

1877-1878 ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՒ ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՎՐԱՅ

1877 Ապրիլի 12ին Ռուսաստանը պատերազմ՝ յայտարարեց թուրքիային: Պատերազմն ընթանում էր երկու ռազմաճակատով՝ Բալկանեան, որի գլխաւոր հրամանատարն էր ցարի եղբայր Նիկոլայ Նիկոլայելիչ Ռոմանովը (թուրքական 160 հազարանոց բանակի դէմ ունէր 185 հազարանոց բանակ), եւ կովկասեան, որի գլխաւոր հրամանատարն էր Կովկասի փոխարքայ Միխայիլ Նիկոլայելիչ Ռոմանովը՝ ցարի միւս եղբայրը, որ ունէր 70 հազարանոց բանակ՝ թուրքական 55 հազարանոց բանակի դէմ: Կովկասեան ռազմաճակատի կորպուսի հրամանատարն էր Լոռիս-Մելիքովը:

Միքայէլ Տարիելի Լոռիս-Մելիքովը ծնուել էր 1825ին Թիֆլիսում: Սովորել է Լազարեան ճեմարանում, ճեծելազօրի իւնկերների դպրոցում: 1840ին մասնակցել է Շամիլի գլխաւորած լեռնականների դէմ պայքարին: 1853-1856 մասնակցել է Բայանդուրի, Ալեքսանդրապոլի, Կարսի ճակատամարտերին եւ ստացել գեներալ-մայորի կոչում: 1860-1873 նշանակուել է Հարաւային Դաղստանի զինուորական պետ, Դերբենդի քաղաքապետ, Թերեքի մարզի պետ: 1877-1878 Ռուս-թուրքական պատերազմում կովկասեան առանձին կորպուսի հրամանատարն էր: Ակտիւ մասնակցութիւն է ունեցել Արդահանի գլուհին, Ալաջայի բարձունքներում մղուած մարտերին, Վանը բռնագրաւած թուրքական բանակի ջախջախմանը: 1878ին ստացել է կոմսի տիտղոս: 1879ին նշանակուել է Աստրախանի, Սարատովի, Սամարայի, Խարկովի ժամանակաւոր գեներալ նահանգապետ: 1880 Փետրուարի 12ին Ալեքսանդր Բ.ի հրամանով նշանակուել է Գերագոյն կարգադրիչ յանձնաժողովի նախագահ, ապա, իր առաջարգոյն կարգադրիչ յանձնաժողովի ցրումից յետոյ, նշանակուել է Ռուսական կով, յանձնաժողովի ցրումից յետոյ, նախագահ, ի տարբերութիւն կայսրութեան ներքին գործերի նախարար: Ի տարբերութիւն

վարուող դաժան քաղաքականութեան՝ Լոռիս-Մելիքովն աւելի լայնախոհ է տրամադրուած եղել յեղափոխականների ու յեղափոխական շարժումների նկատմամբ: Ժողովրդի տնտեսական վիճակի բարելաւման, քաղաքական բնագաւառում բարեփոխումներ կատարելու առաջարկով նախագծեր է ներկայացրել ցարին: 1881թուականին, երբ գահ բարձրացաւ Ալեքսանդր Գ.ը, Լոռիս-Մելիքովը պաշտօնաթող եղաւ ու հեռացաւ Ռուսաստանից՝ իրեն նուիրելով յուշեր գրելուն: Արժէքաւոր են յատկապէս նրա «Կովկասեան կառավարիչների մասին»՝ 1776ից մինչեւ դարի վերջը, «Նիւթեր Հաջի Մուրադի մասին» եւ «Երկտող Թերեքի մարզի կացութեան մասին» յուշերը:

Ժամանակակիցները Լոռիս-Մելիքովին ներկայացրել են որպէս ուազմական գործին քաջատեղեակ, տաղանդաւոր հեծելազօրային հրամանատար: Լոռիս-Մելիքովի կերպարը առաւել բացայացուեց ներքին գործերի նախարարի պաշտօնում: Յիշեցնենք նաեւ, որ Ռուսական կայսրութեան պատմութեան մէջ եզակի դէպք էր, երբ որեւէ այլազգի դեկավարում էր այդչափ կարեւոր բնագաւառ:

Լոռիս-Մելիքովը վախճանուել է Նիցցայում, 1888:

Ռուսական 52 հազարանոց կորպուսը բաժանուած էր երեք ուղղութիւնների՝ Ալեքսանդրապոլ - Կարս (կենտրոնական, 27000 զինուոր), աջ թեւ՝ Ախալցխա - Արդահան (12000 զինուոր, գեներալ Դեւել) եւ ձախ թեւ՝ ուր կենտրոնացուած էր Երեւանեան ջոկատը, 13000 զինուոր՝ Տէր-Ղուկասովի հրամանատարութեամբ:

Արշակ Յարութիւնի Հուկասովը ծնուել է 1819ին Թիֆլիսում: Սովորել Ներսիսեան դպրոցում, ապա՝ 1839ին աւարտել է Պետերբուրգի Զաղորդակցութեան Ճանապարհների ինստիտուտը: 1842-1850 աշխատել է Կովկասում եւ մասնակցել ուազմավարական ճանապարհի շինարարութեանը: 1850ին անցել է զինուորական ծառայութեան: 1852ին Ապշերոննեան գնդի Յրդ գումարտակի հրամանատարի օգնականն էր, ապա՝ հրամանատարը: 1865ին ստացել է գեներալ-մայորի կոչում եւ նշանակուել 19րդ հետեւակային զօրամասի հրամանատարի օգնական: 1869ի Մարտից ղեկավարում էր 38րդ հետեւակային զօրամասը: 1877-1878ի պատեհազմում աչքի է ընկել Բայազետի, Դիարիկի, Ղարաքիլիսայի, Ալաշկերտի, Զեղեկանի գրաւումների ժամանակ: 1877 Յունիսի 4ին Դրամդաղի, Յունիսի 9ին Դհարի ճակատամարտերում պարտութեան է մատնել թուական գերազանցութիւն ունեցող թշնա-

մուն: Պատերազմների պատմութեան մէջ անօրինակ սխրանք էր Տէր-Ղուկասովի Յունիսի 16-24ը տեւած նահանջը: Ռազմական պատմաբաններն այդ նահանջը համեմատում են պատմիչ եւ զօրավար Քսենոփոնի ն.թ. 401-400 նահանջի հետ: Նահանջն առաւել ծանր էր, քանի որ ջոկատում կար 600 հիւանդ ու վիրաւոր, մազապուրծ 2500 հայ ընտանիք: Հայրենակիցներին զօրքի հետ տանելլ լի էր մեծագոյն դժուարութիւններով: Ի վերջոյ, Տէր-Ղուկասովը կայացնում է ճակատագրական վճիռ՝ յայտարարելով, «Կ'ապրենք, քող մեզ հետ ապրեն, կը մեռնենք, քող մեզ հետ մեռնեն»: 1878 Յունուարից գեներալ-լեյտենանտ (կոչումն ստացել է 1876ին) Տէր-Ղուկասովը նշանակում է Ախալցխայի ուղղութեամբ գործող ռուսական զօրքերի հրամանատար: Պատերազմի աւարտից յետոյ նշանակիում է Անդրկովկասեան զօրքերի հրամանատար, ապա՝ Կովկասեան Բ. կորպուսի հրամանատար:

Տէր-Ղուկասովը մահացել է 1881ին եւ թաղուել Թիֆլիսի հայկական եկեղեցու բակում:

1877 Ապրիլի 15ին սկսուեց Երեւանեան ջոկատի յարձակումը: Մինչեւ Յունիսի 13ը ռուսական զօրքերը գրաւեցին Բայազետը, Դիաղինը, Ղարաքիլիսան, Ալաշկերտը, Արդահանը: Մայիսի 20ին պաշարուեց Կարսը, Յունիսի 4ին Տէր-Ղուկասովը փայլուն յաղթանակ տարաւ Դրադաղի լեռներում կայացած ճակատամարտում: Թուրքերը, փորձելով կանգնեցնել ռուսական առաջիսաղացումը՝ գերակշիռ ուժերով, Մուխտար փաշայի գլխաւորութեամբ ացնում են յարձակման եւ Զեւինի մօտ ծանր հարուած հասցնում գեներալ Գեյմանի զօրախմբին, որից յետոյ ռուսական «Կենտրոն» զօրախումբը կազմակերպում է հարկադրական նահանջ: Տէր-Ղուկասովի ջոկատի համար ստեղծւում է Արևապատման վտանգ: Լոռիս-Մելիքովի հրամանով, Յունիսի 16-24ը իրականացրում է ներքոյիշեալ յայտնի նահանջը:

Թուրքական յարձակման արդիւնքում սկսում է Բայազետի հերոսական պաշտպանութիւնը, որ գլխաւորում էր կապիտան Ֆյորոր Շտոկուչչը: Ռուսական փոքրաթիւ կայազօրին միացած հայ կամաւորները ռազմամթերքի ու սննդամթերքի սղութեան պայմաններում որոշում են պայքարել մինչեւ վերջ: Պաշարուածները մի քանի անգամ փորձ են անում տեղեկութիւն հասցնել Տէր-Ղուկասովին, սակայն բանագնացներն ընկնում են թշնամու ձեռքն ու սպանում: Ի վերջոյ, տեղանքին քաջ ծանօթ, քրդերէնին լաւ տիրապետող հայ կամաւոր Սամսոն Տէր-Պօղոսեանին

յաջողւում է անցնել պաշարման գիծը եւ լուրը հասցնել Տէր-Ղուկասովին: Քաջարի գեներալը, լսելով Բայազետի պաշպանների օրհասական վիճակի մասին, ոգեշունչ ելոյթով դիմում է իր ջոկատի մարտիկներին՝ խօսքն աւարտելով ահարկու գոչիւնով. «Գնանք երանց հետ մեռնելու»:

Յունիսի 28ին, ութժամեայ հերոսամարտի արդիւնքում թուրքական զօրքերը ջախջախւում են, եւ Բայազետը ազատագրում է պաշարումից: Բայազետի համար մարտերն իրենց արտացոլումն են գտել մեծ վիպասան Բաֆֆու «Խենթը» վէպում, որի գլխաւոր հերոս Սամսոն Տէր-Պողոսեանը՝ «Խենթ» անունով, դարձաւ հայ ազատագրման պայքարի ուսհվիրաներից մէկը:

Բայազետի ազատագրումը Մուխտար փաշայի պատերազմական գործողութիւններում բեկում մտցնելու ծրագրին հասցուած առաջին ծանր հարուած էր: 1877ի Սեպտեմբեր-Նոյեմբեր ամիսներին ոռուսական զօրքերը նոր յաղթանակներ տարան Ալաջայի բարձունքում, Դեւէ-Բոյնում: Իսկ նոյեմբերի 5-6ին, երկօրեայ մարտերից յետոյ՝ ոռուսները գրաւեցին անառիկ համարուող կարսի ամրոցը եւ, յաղթահարելով սառնամանիքը՝ շարժուեցին դէպի կարին (էրզրում), որ առանց դիմադրութեան յանձնուեց 1878 Փետրուարի 8ին:

Ոռուսական զօրքերի կովկասեան ռազմաճակատում ձեռք բերած յաջողութիւնների մէջ իրենց ծանրակշիռ աւանդ ունեն ոռուսական բանակի հայազգի գեներալներ Լոռիս-Մելիքովը, Արշակ Տէր-Ղուկասովը, Լազարեւը՝ կարսի հերոսը, Շելկովնիկովը, Ալիսազովը, Քիշմիշեւը:

Պատերազմին իրենց քաջարի մասնակցութիւնը բերեցին հայ կամաւորները, որոնց թիւը հասնում էր 15-20 հազարի: Նրանք մասնակցեցին գրեթէ բոլոր ճակատամարտերին: 2400 հայ կամաւոր պարգեւատրուեց շքանչաններով եւ մեղալներով: Ոռուսական հրամանատարներից շատերն իրենց երախտիքի խօսքերն ուղղելով հայ կամաւորներին՝ ընդգծում են նրանց հաւատարմութիւնը, դիմացկունութիւնը, արիութիւնն ու անձնուիրութիւնը, առանձնակի գնահատանքի եւ շնորհակալանքի արժանացնելով հասարակ հայ գիւղացիներին, որոնք իրենց սննդի վերջին պաշարները, անասնակերը առանց խնայելու տրամադրում էին ոռուսական բանակին: Բարոյապէս, Փիզիկապէս ու տընտեսապէս իր մասնակցութիւնը բերելով պատերազմական գործութիւնների մասնակցութիւնը հայութիւնում էր առաջնային դեր:

դութիւններին հայութիւնը ապագայ յաղթանակի հետ էր կապում բազմաչարչար հայրենիքի ազատագրումը:

Մակայն հայ ժողովրդի նուիրական ձգտումներն այս անգամ էլ մնալու էին անկատար, որովհետեւ թէ ցարիզմը, թէ նրա եւրոպական գործընկերներն ու հակառակորդները բոլորովին էլ մտադրութիւն չունէին լուծում տալ իրենց մեղքով արիւնլուայ Հայկական հարցին:

Թուրքական խօսարանի 1877 Ապրիլի 13ի նիստում, երբ յայտարարուեց պատերազմի մասին, հայ պատգամաւորների քննարկումներից յետոյ, արեւմտահայութիւնը հրաժարուեց պատերազմին մասնակցել, առաւել եւս՝ զէնք գործադրել Ռուսաստանի դէմ:

Այս հարցերի քննութեան շուրջը ծագած վէճերը նոր-նոր էին բորբոքում, երբ նոյն թուականին Վաղարշակերտի (Ալաշկերտ) հովտի հայկական 24 գիւղերի բնակչութեան զարհուրելի կոտորած տեղի ունեցաւ եւ ջարդի ահաւոր տպաւորութիւնը «մեղմացնելու» նպատակով արիւնախում սուլթանն ընդունեց Ներսէս Վարժապետեան պատրիարքին: «Սրտարաց» զրոյց ունենալով պատրիարքի հետ՝ «մի մրջիւն» անգամ չսպանած սուլթանը նրան յանձնեց կառավարական պարզեւը եւ «շնորհակալութիւնը» յայտնեց հայ ժողովրդի վերաբերմունքի համար:

Կանխազգալով պատերազմի դժուարութիւնները՝ ոխակալ սուլթանը ցանկանում էր սիրաշահել արեւմտահայութեանը, նըրան մոռացնել տալ դարաւոր ճնշման ու հալածանքների փաստերը եւ պատրիարքի օգնութեամբ արեւմտահայ ուժը օգտագործել յօդուտ թուրքիայի նպատակների:

Արեւմտահայ ստուար զանգուածները չին հաւատում սուլթանի խոստումներին եւ կրահեցին նրա խորամանկ քայլերի իմաստը: 1877ի նոյեմբերի 25ին գումարուած Ազգային ժողովի դրանիւակ նիստում քննարկուեց 17-45 տարեկան քրիստոնեաններին ընդհանուր զինուորական ծառայութեան կանչելու սուլթանի հրամանը: Ամիրաներն ու երեսփոխանները պնդում էին հրամանին ենթարկուելու տեսակէտը: Ժողովականների մեծ մասը, նրանց հետ նաեւ պատրիարքարան ներխուժած ժողովրդի ներկայացուցիչները, դէմ էին հրամանին ենթարկուելու մտքին: Վէճերն մնացին ապարդիւն, եւ Ազգային ժողովը քննութեան առարկայ հարցի առթիւ որոշում չկայացրեց:

1877ի Դեկտեմբերի 14ին գումարուեց նոր ժողով, որ մերժեց սուլթանի հրամանը: Արեւմտահայութեանն աննպատակ կորստի տանող սուլթանի փորձերը ձախողուեցին: Առաջարկելով մտնել զինուորական ծառայութեան՝ սուլթանը ձգտում էր արեւմտահայութեանը զրկել դիմադրողականութիւնից, օդտագործել նրա կարող ուժերը եւ պատերազմի առիթը ծառայեցնելով: իր նպատակներին մէկընդմիշտ լուծել Հայկական հարցը:

Ռուսական բանակներին յաղթարշաւը Բալկանեան եւ Կովկասեան ռազմաճակատներում շրջադարձ կատարեց նաեւ հայքաղաքական գործիչների հայեացքներում: Ինչպէս վկայում է Կ. Իզմիրեանը, հայ ժողովուրդը միաբանուեց, ազգային զեկի մօտ կանգնածները մի հոգի դարձան՝ «Այժմ աստ ոչ մի կուսակցութիւն կայ, ոչ վէճ»:

Բոլորի հայեացքներն ուղղուած էին դէպի ռազմաճակատ: Թուրքիայի պարտութեան անխուսափելիութիւնն արագացրեց արեւմտահայ գործիչների կողմնորոշման ընթացքը:

1877 Հոկտեմբերի 21ին Ազգային ժողովի երեսփոխանական ժողովը ընդունում է Հայկական հարցը Ռուսաստանի լուծմանը վստահելու մասին գաղտնի որոշում:

Ժողովում մշակուում է Հայկական հարցի լուծման նոր տարբերակ:

Որոշման մէջ ասուած էր.

«Ա.- Ռուսերու կողմէ չվերադարձուի կրկին Տաճկաց Մեծ Հայք՝ մինչեւ Նփրատի ափերը: Այդ հողամասերը կցուելով Արարատեան նահանգին՝ մաս կազմեն Կայսերական իշխանութեան:

Բ.- Եթէ Ռուսաստանը դիտաւորութիւն չունի նոր հողեր գրաւելու, ինչպէս կը լսեմ, Հայաստանի յիշեալ մասին և հայ ժողովրդին ալ շնորհուի, այն բոլոր արտօնութիւնները, որ նորին Կայսերական Մեծութիւնը պիտի շնորհէ Պուլկարիոյ և Պուլկար ժողովրդին:

Գ.- Եթէ ես պիտի վերադարձուին այդ հողամասերը Օսմանեան Պետութեան, նիւթական երաշխաւորութիւններ պահանջուին անկէ երկրին բարեկարգութեան և հապատակաց հաւասարութեան համար: Այդ բարեկարգութիւններուն մէջ պէտք է յիշատակուին.

- Ոստիկանութիւնը մեծ մասամբ պէտք է բաղկանայ հայերէն:

- Կանոնաւոր զինուորական կրթութիւն տրուի հայերուն:

- Քուրտերն ու Զէրքէզները բոլորովին հեռանան Հայաստանէն եւ կամ լեռներէն իշնելով բաղաներու և գիւղերու մէջ՝ կայուն

թնակութիւն հաստատեն: Որոշ ատենի մը համար ոստիկան չառնուի անոնցմէն:

- Քաղաքային պաշտօններ յանձնուին հայերուն, առանց խորութեամ: Մասնաւորաբար Հայեր ըլլան կուսակալները եւ գաւառապետները: Այս բռնոր բարենորոգումները գործադրութեան դրուելէ յետոյ միայն Կայսերական զօրքերը պարպես երկիրը»¹:

Ինչպէս տեսնում ենք, արեւմտահայ Ազգային ժողովը համոզուած չէր, որ Ռուսաստանի օգնութեամբ վերջնական լուծում կը ստանայ Հայկական հարցը:

Այդ պատճառով էլ ժողովի ընդունուած որոշման մէջ կրկնուում էին բարենորոգումների ծրագրերի կէտերը, որոնք անպատասխան ու անիրազործելի էին մնացել: Մտնելով պատերազմի մէջ՝ Ռուսաստանը նպատակ ունէր թօթափելու 1856ի Փարիզի ստորացուցիչ պայմանագիրը, դիրքերը ամրացնել Բալկաններում, տիրանալ նեղուցներին:

Բեռլինի կոնգրէսի գումարման լուրը ստանալուն պէս ազգային գործիչները որոշեցին նախնիկ պատրիարք, ճանաչուած քաղաքական ու կրօնական գործիչ Մ. Խրիմեանի գլխաւորութեամբ եւրոպական երկրների ուղարկել պատրիարքարանի պատուիրակութիւնը: Ամիսներ շարունակ եւրոպական պալատները յղելով հայկական հարցի արդար լուծման խնդրագրեր, Մ. Խրիմեանը հարիւր հազարաւոր անմեղ զոհերի, երեք միլիոն ստրկացուած ժողովրդի համար գութ էր աղերսում: Սակայն կարեկցանքը ոտնակուս էր արևում այնտեղ, որտեղ խօսում էր շահը: Թէեւ եւրոպական երկրները փոքր ու ճնշուած ժողովուրդների ի պաշտպանութիւն խաւաքարտէ սրեր էին ճօճում, բայց դրանք անաղմուկ կրակոցներ էին միայն:

«Ճշմարիտ օսմանների» անքուն գերեզմանապահ սուլթանը դիմում էր նոր խաղերի, որպէսզի ճախողի հայկական հարցի լուծումը: Նա սկզբում դէմ չէր հայկական պատուիրակութեան առաքելութեանը եւ փայփայում էր այն յոյսը, թէ հայկական պահանջները խառնաշփոթ կը ստեղծեն ու չի լուծուի նաեւ Բուլղարիայի հարցը: Բայց, երբ որոշակիորէն պարզուեց, որ բուլղարական հարցը անպայմանօրէն լուծուելու է, սուլթանը պատրիարքից պահանջեց հետ կանչել պատուիրակութեանը:

1 ԱՄՐՈՒԽՆԱՆ, Հայկական խմբիրներն եւ ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910), Թիֆլիս 1912, 271:

թուռում էր, թէ հասել է այն ժամանակը, երբ հայ ժողովուրդը եւս թօթափելու է ատելի լուծը: 16-րդ յօդուածը այդ յոյսերի համար կենդանի երաշխիք էր: Սակայն այլ էր իրականում: Բեռլինում ոչ թէ լուծուելու էր այն: Միջազգային դիւանագիտութեան խարդախութիւններին անսովոր հայ գործիչները հաւատում էին դիւանագէտների խարուսիկ ժպիտներին: Մինչդեռ դրանք միայն բարեկրթութեան արտայայտութիւններ էին, իսկ գործնականում նրանք արիւնոտ սուլթանի բացայաց ու թաքնուած գործընկերներն էին:

«Սգաւոր Հայաստանի կենդանի պատկերը»² հայրենաշունչ գործիչ Մ. Խրիմեանը յոյս ունէր, թէ արցունքի լեզուն կարեկցանք կծնի, տանջահար ժողովրդի հարցի արդար լուծում կը բերի: Բեռլինի կոնգրէսում լուծում էր ոչ թէ ճնշուած ժողովուրդների ազատագրութեան հարցը, այլ մեծ տէրութիւնների գերիշխանութեան հարցը:

16րդ յօդուածի կարկատան ճլրդ յօդուածից զժգոհ Մ. Խրիմեանը հայ ժողովրդի անունից որպէս դիւանագիտական խարդաւանքի դէմ բողոք, յայտարարեց: «Հայ պատուիրակութիւնը արեւելք պիտի դառնայ իր եեւ տանելով այս դասը»:

Որն էր այդ դասը: Դիմելով Հայոց Մայր եկեղեցում հաւաքուած ժողովրդին, Մ. Խրիմեանը յայտնելով հարիսայի ու թղթի շերեփի մասին, ասաց: «Հոն, ուր գէնեն է խօսողը, ուր սուրերը կը շողջողան, հոն ինչ գործ ունի խնդիրք և աղերսութիւններ»³:

Ազատութեան հասնելու համար, շարունակում է իր միտքը Մ. Խրիմեանը, պէտք է գնալ գաւառները, ոչ թէ ձեռնբաց, այլ՝ «Մէկ-մէկ գէնե տարեք, գէնե առեք, եւ դարձեալ գէնե: Ժողովուրդ, ամէնէն առաջ քն ազատութեան յոյսը քն վրայ դիր, քն խելքին, եւ քն բազուկին ուժ տուր, մարդ ինքն իրեն պէտք է աշխատի, որ փրկուի»⁴:

2 ԶԵՐԱԶ, Մ., Պեղիսէն մինչեւ Լոզան, ի Հայաստանի կոչմակ, 1923, N 18, 550:

3 Ա.ԼՊՈՅԱՃԵԱՆ, Ա., Միմաս Զերազ, իր կեամքը եւ գործը, Գահիրէ 1927, 203:

4 «Ամենայն Հայոց Հայրիկ», Բոստոն 1957, 512:

5 Անդ, 513:

Հայրենասէր գործիչը ճիշտ էր հասկացել ազատութեան հասնելու միակ ճանապարհը: Սա գաղափարական շրջադարձ էր ազգային ազատագրական գաղափարախօսութեան մէջ: Այդուհետ ազգային կեանքը մուտք գործեց սեփական ուժերին յենուելու, նրա օգնութեամբ ազատութեան հարցը լուծելու գաղափարը:

Երիցս ճիշտ էր Յ. Պարոնեանը, երբ 61րդ յօդուածով խանդավառուած տկարամիտ դիւանագէտների մասին գրում էր. «շտերը պնդեցին այն ատեն, թէ ազգը մեծ օգուտ քաղեց անոնց ուղեւորութենէն, թէ ճայն հանելու չէ, այդ օգուտին ինչ ըլլալն վերջը պիտի հասկացուի»⁶:

Իսկ վերջը անփառունակ էր, արիւնով լեցուն: Թուրքական մոլեւանդութիւնը, որ ռուսական զօրքի ներկայութեամբ սաստուել էր, սպասում էր այն օրուան, երբ հայերի հովանաւորները կը հեռանան, երբ կը բացուի թալանի ու հաշուեյարդարի ճանապարհները:

Ռուսական զօրքերը հեռանում էին գրաւած շրջաններից: Արեւմտահայութիւնը կանխատեսելով գալիք ծանր ժամանակները, կարինցի ծեր կնոջ բերանով էր արտայայտում իր դժգոհութիւնը. «Ոչ գալերնիդ լինէր, ոչ գնալնիդ...»⁷:

Ռուսների հեռանալուց յետոյ, գրում է «Մշակի» թղթակիցը, «Քղիի պեյքրն աւելի կը սաստկացնեն իրենց բռնութիւնները, հետեւարար աչքի որ կողմը դարձնես, ողորմելի տեսարան մը կը ներկայացնէ Հայաստանը»: Քրդերի յանցագործութիւնները նկատի ունենալով, թէեւ մէկ ամիս առաջ են մտել կոմիսարները, սակայն դրութիւնը չի փոխւում «Հայարնակ շատ գաւառներու պէս կեղի եւս իր հետաքրքրական «այսմաւուրմ» ունի, եւ ինչպէս այլ եւ այլ ժամանակներու մէջ կրկնուած նշմարտութիւն մըն է, այս գաւառն ամէն օր գրեթէ նոր բատերախաղ մը կ'ունենայ, որու դերասանը քուրտն է, տնօրէնը պեյքրն, եւ ողբերգութիւնը Հայ երիտասարդներու վրայ կը վերջանայ»⁸:

1880ի անլուր տառապանքի ու գազանային հալածանքի արդիւնքը գաղթն էր: Զրկուած ապահովութեան տարրական հնարաւորութիւնից, կարինահայութիւնը բռնեց գաղթի ճանա-

6 ԵՐԻՑԵԱՆ, Ա., Մի երես կարմոյ նորագոյն պատմութիւնից, ի Փորձ, 1879, N 1, 183:

7 ՊԱՐՈՆԵԱՆ, Յ., Ելք, հո. Գ., 19:

8 Մշակ, 1879, N1, 100:

պարհը: Սակայն այս անգամ եւս հայերը չէին փրկւում քրդական յարձակումներից: Սպանութիւնները, թալանը, առեւանգումները շարունակում էին: Վերջապէս կոմիսարների պահանջով «երեւելի» քուրդ աւազակները ձերբակալում են: «...Անոնց բացակայութեան միջոցին երկիրն եղեմական խաղաղութիւն մը կը վայելէր. բայց տարին չըռուրած, Պեյքն իրենց տեղերը վերադարձան, ով գիտէ ինչ շնորհներով»⁹:

Բէյերի վերադարձը նշում է երեք հայ երիտասարդների սպանութեամբ: Վ. Տանիշեան նկարագրելով քուրդ վայրագների գործունէութիւնը, գրում էր, թէ նրանք ազատ են իրենց գործողութիւնների մէջ, որովհետեւ «քուրքական կառավարութիւնը հովանաւորում է երանց»¹⁰:

Քրդերը ներխուժելով Խնուսի գաւառի Գովադակ գիւղը Մուկոյ անունով հայի տնից ցանկանում են խլել եզան չորս կաշի: Ինքնապաշտպանութեան ժամանակ Մուկոն ատրճանակով քրդերից երկուսին սպանում է: Գաւառապետի հրամանով դէպքի հետ ոչ մի կապ չունեցող 19 հայեր բանտարկում են: Պահանջուած չափի կաշառք տալուց յետոյ նրացից տասն ազատում են, իսկ իննը մնում է բանտում:

Թէ ինչ էր լինելու նրանց ճակատագիրը, պարզ էր: Բանտերում քրիստոնեաների նկատմամբ կիրառուող դաժան գործողութիւնները «երաշխաւորուած էին քուրքական օրէնքներով»¹¹: «Նոյնիսկ ինկվիզիցիայի գործադրած միջոցները ոչնչութիւն էին դրանց նկատմամբ: Եթէ երկրում կայ նման արդարադատութիւն, ապա հասկանալի է, թէ ինչ վիճակում է գտնելում նիշուած ժողովուրդը»- եղրափակում է Վ. Տանիշեան¹²:

Նահանգում հայ-քրդական յարաբերութիւնները կագաւորելու նպատակով, գաւառապետերից մէկի հրամանով, գետում մի քանի քրդերի խեղդուելու պատրուակով, բանտարկում են հայ-կական չորս գիւղերի գիւղապետերը: Բայց ճշմարտութիւնն այն է, յիշեցնում է է. Դիլոնը, որ այդ օրահացի կարօտ, թափառական քրդերը իրենք էին ջուրը անցնելիս խեղդուել: Թուրք պաշ-

9 Անդ, 197:

10 Անդ:

11 ТАНИПШЕВА, В., Позор цивилизации, СПБ. 1897, 10:

12 Положение армян, 337:

13 ТАНИПШЕВА, անդ:

տօնեաները գիտէին, որ հայերը անմեղ են, բայց քրդական մոլեռանդութիւնը բողբոքելու նպատակով դիմում են այդ ցուցադրական միջոցին: Բանտարկուածների իւրաքանչիւրից ստանալով 75 ֆունտ կաշառք, գաւառապետը ազատում է նրանց: «Նևանձամբ տեսել եմ նրանցից երկուսին», - վկայում է ի. Դիլոնը¹⁴:

Տեղական իշխանութիւնների նման վերաբերմունքը թեւաւորում էր քրդերին: Բասենի կրտաբազայ գիւղում է. Դիլոնին յայտնում են, որ քրդերը իրենց գիւղից տարել են 22 եղ, 2 ձի, 60 կով, 20 ոչխար¹⁵:

Թուրքական կառավարութեան անտարբերութիւնն ունէր իր պատճառը: Նրան ձեռնոտու էր, որ քրդերի օգնութեամբ իրականացուէր պետական ձուլման քաղաքականութիւնը, որն արագացնելու միջոցների մէջ իր ուրոյն տեղն ունէր հարստահարութիւններն ու հալածանքների օգնութեամբ քրիստոնեայ հպատակների մահմեղականացման մշակուած ծրագիրը: Ինչ կարելի էր սպասել տեղական պաշտօնեաններից, երբ նրանք անձամբ էին մասնակցում հայերի դէմ ձեռնարկուող միջոցառումներին:

1891 Մարտի 7ին կարինի անգլիացի գիւղատուը յայտնում է, որ գաւառապետ Հուսէինը իր ազգականի հետ Գասպար անունով հայի գեղեցիկ կնոջը առեւանգելու նպատակով ներխուժել է նրա տուն. Գաւառապետը, ի հարկէ, ցանկանում էր գործն աւարտել անաղմուկ, բայց հանդիպելով Գասպարի դիմադրութեան ու կնոջ օգնութեան կանչերին, սպանում է երիտասարդ կնոջն ու հեռանում¹⁶:

Մէկ ուրիշ դէպք: Քրդերը լծկաններ տանելու նպատակով յարձակում են Դերջանի կախ-կիւ գիւղի դաշտերից մէկում աշխատող չորս եղբայրների վրայ: Հայերը դիմադրում են: Ընդհարման ժամանակ եղբայրներից մէկը սպանում է: Երեքը վիրաւորում: Քրդերից չորսը վիրաւորում է, մնացածները գերւում: Գաւառապետը լսելով այդ մասին, պարսաւում է քրդերին եւ մղում նոր յարձակման: Քրդերը ազատում են գերուածներին եւ թալանով բեռնուած հեռանում¹⁷:

14 ԴИԼՈՆ, Է., անդ, 338:

15 Անդ:

16 МАК-КОЛЬ, К. М., *Ответственность Англии*, ի *Положение армян*, 145:

17 Անդ, 146:

Նահանգի Ամաստ գիւղի վրայ յարձակուող քրդերը ամբողջ գիշեր չկարողանալով կոտրել հայերի դիմադրութիւնը, յետ են քաշւում: Թօփրակ Կալէի գաւառապետը, որ լսել էր դէպքի մասին, փոխանակ օգնութեան հասնելու, աւելի է գրգռում քրդերի մոլեռանդութիւնը եւ դրդում նոր յարձակման¹⁸:

Աւելին սպասել աւազակապետութեան պաշտօնեայից հնարաւոր չէր: Նրանց հիմնական նպատակը հալածանքների սաստկացումն էր, հայերի դէմ կիրառուող բռնութիւնների քաջալերումը: Նման իրավիճակի պատճառը, գրում է է. Դիլոնը, ըստ «քուրքական հաւասարումների, սկսում են հայերի եւ քրդերի յաւիտենական պայքարից: Եւ քանի դեռ այն շարունակում է եւ չկայ հաշտեցման հնարաւորութիւն, ապա վերանում է նաև տեղական իշխանութիւնների ու կառավարութեան պատասխանատուութիւնը»¹⁹:

Կարինի անգլիական հիւպատոսը նկարագրելով նահանգի հայութեան վիճակը, այն բնորշում է այսպէս՝ «Սուլթանի հպատակ հայերը բացարձակապէս անպաշտան են...»²⁰: Եւ դա այն դէպքում, թուրք բարեկամին ուղղուած խօսքում գրում է Գր. Դիեւը (Գրիգոր Ճանաշեան), երբ «հայ հողագործը կերակրում է եւ իրեն, եւ ճեզ. երէ Մուշի, Վանի հողագործը չինէր, արդեօֆ ով պէտք է կշտացնէր ճեր անրովանդակ պալատական հարեւմի որովայնը իր պարագիտ 600 ծառաներով, 800ի չափ խոհարարներով, որոնց տրամադրութեան տակ ամէն օր դրւում էր 12000 գլուխ ոչխար, որոնք կրտում էին Հայաստանից»²¹:

Սուլթանական թուրքիայում քրիստոնեայի ունեցուածքը, տունը, անձը, պատկանում էր մահմետականին: Նա այդ իրաւունքից օգտում էր պատեհ առիթը ներկայանալիս: Իսկ առիթ ստեղծում էր ցանկացած պահի: Մահմետականութեան իրաւունքերի ճեւերից մէկը հանդիսացող յայտարարութիւնը երբեմն կրում էր նաև կազմակերպուած բնոյթ, որտեղ առաջին ջութակի դեր կատարում էին տեղակայ իշխանութիւնների ներկայացուցիչները:

«Մշակի» թղթակից Հայկակը յայտնում է, որ կարնոյ առաջնորդի կողմանէ պատրիարքարան գիր մը հասած է, որ կը

18 Մշակ, 1880, 204:

19 ԴИԼՈՆ, Է., անդ, 341:

20 Պոլոյնու արքան, 133:

21 Զիրենի, Թիֆլիս 1915, 317:

նկարագրէ Խիզանի գաւառի ցաւալի վիճակը. «Գաւառը պաշարուած է. քրդեր, տէրութեան պաշտօնեաներն, զօրքերն ամէն չարիք կը գործադրեն, հազիր քանի մը հայեր կարող եղած են փախչի ու գալ ի կարին ու իրենց դառն վիճակը ներկայացնել»: Այնուհետեւ՝ «ուր հայ կայ, կառավարութիւնը որեւէ ջանք, դաւ, խարդաւանք չի խնայել աղքատացնելու, ցրելու, ջնջելու այդ հայութիւնը»²²:

Սուլթանի քաղաքականութիւնը պարզ էր՝ աւերել հայութեան տնտեսական վիճակը, դրան գումարել քաղաքական ու կրօնական հալածանքը եւ հայերին դրդել կամ գաղթի, կամ կրօնափոխութեան:

«Վերջին լուրերին նայելով,- գրում է «Մշակը», - Թուրքիայի հայերի դրութիւնը, մանաւանդ Թուրքիայի ասիական նահանգներում, հետզիեսէ անտանելի է դառնում: Ուր են մնացել քարենորդումների խոստմունքները, ինչ եղաւ Ս. Ստեֆանոյի եւ Բեռլինի դաշնագիրների այն յօդուածները, որոնք հայերին էին վերաբերում»²³:

Անմոռանալի են Բաֆֆու խօսքերը, նա ժամանակին էր զգացել ճլրդ յօդուածի հետեւանքները եւ արեւմտահայութեանը կոչում էր ինքնապաշտպանութեան եւ ոչ թէ խորհուրդ էր տալիս փաթթուել քաղցր անուրջներին: Խսկ Յ. Պարոնեանը հայկական թերթերի խմբագիրներին խորհուրդ էր տալիս քիչ օդտապործել բարենորոգութիւն բառը, որովհետեւ այն բորբոքում եւ նոր գործողութիւնների է դրդում հարստահարիչներին»²⁴:

Արեւմտահայութիւնը սեփական ուժի նկատմամբ հաւատը կորցնելով, ապրելու իրաւունք էր հայցում դեսպաններից ու պատրիարքից: Արդարացի էր Յ. Սուաճեանը, երբ գաւառահայութեանը խորհուրդ էր տալիս յոյսը կտրել Պոլսի երեւելիներից. «Ով, ասիարնակ հարստահարեալ հայեր, դուք որ մեծամեծ յոյսերով եւ եռանդուն փափառով Պոլսոյ հայերէն օգնութեան կսպասէք, քիչ մալ հարերեցէք, որ անոնք հոս ինքզինքնին գտնեն, եւ նախ առ միմեան ունեցած պարտաւորութիւննին նանջան եւ ձեզի ալ կեանք տան:

22 Մշակ, 1879, N 2:

23 Անդ, N 6:

24 ՊԱՐՈՆԵԱՆ, Յ., ԵՂ, հա. Դ., 99:

Համբերեցէք, օր մը հարկաւ ձեր պաղատանացը լսող կը գտնուի»²⁵:

Աւելին, Պոլսի երեւելիներն ու պատրիարքարանը ժամանակի մեծ մասը ծախսելով «Պոլսոյ օրինաւորութեան» վրայ, «գաւառներն երեսի վրայ թողած են: Այս ընթացքը եթէ դարձեալ այսպէս շարունակուելու ըլլայ, լուսաւորչական հայ ազգ միայն պոլսեցին պիտի կոչուինք, եւ կենտրոնական վարչութիւնը պիտի նմանի անանի հօր մը, որն որ իւր փառքը իր հանգստութեան մէջ փնտուլով անհոգ կը կենայ զինքը յիշատակով անմահացնող սերնդին սուրբ պարտիներուն»²⁶:

Ուրիշ խօսքով, Յ. Սուաճեանը պատրիարքարանին, երեւելիներին, ազգային վարչութեանը նպատակամղում էր գաւառահայութեան խնդիրների, հոգսերի լուծմանը, եթէ ոչ արեւմտահայութիւնը՝ ինչպէս աւագ կը կորչի ծով հարստահարութիւնների ու կեղեգումների մէջ: Մինչդեռ մեր զօրութիւնը «Մեր Հայաստանի եղայրք են, առանց անոնց աշխարհի առջեւ ոչ մէկ բանով մը կրնանք պարծիլ, ուստի բաւական է մինչեւ ցարդ զանոնի յորդորանոնք միիթ-արելնիս, ալ սկսինք այսուենտեւ կենդանացուցիչ միջոցներով զանոնք ոգեւորել»²⁷:

Խաբուած ու հարստահարուած ժողովրդին կենդանացնելու փորձերը բախւում էին բարբարոսապետութեան պատնէշներին: Ստրկացուած վիճակից դուրս գալու ելք փնտողներին Յ. Պարոնեանը հեգնանքով հանգստացնում էր, թէ անհանգստանալու պատճառներ չկան, չուտով բոլորը Դերջանի գայմագամի պէս կը գործեն եւ հարցերը կը լուծուեն: Իսկ ի՞նչ էր կատարուել: Կարինի նահանգապետը լսելով երկու հայ աղջիկների առեւանդման լուրը, Դերջանի գաւառապետին հրամայում է գտնել «չարագործներին»: Գաւառապետը կարգադրում է զինուորներին: Վերջիններս «անզգուշաբար» ձերբակալում են առեւանդիչ թուրքերին: Զայրացած նահանգապետը գաւառապետից պատասխան է պահանջում: Գաւառապետը սխալն ուղղում է այս կերպ՝ նա ազատում է թուրք յանցագործներին եւ բանտարկում է առեւանդուած աղջիկներին:

25 ՍՈՒԱՃԵԱՆ, Յ., Հրապարակախօսութիւն, 328-329:

26 Անդ, 330:

27 Անդ:

Յ. Պարոնեանը կծու ծաղրով նկատում է՝ «Եթէ Դերջանի քայլամամը գիտենար, որ թուրքերու երկու հայ աղջիկ փախցնելն յանցանք է՝ հարկաւ անմիջապէս զանոնք կը ճերբակալէր....», բայց անմեղ թուրքերը բարեգործութիւն էին կատարել, էլ ինչպէս կարելի էր նրանց «վիատեցնել»²⁸:

Հարստահարութիւնները, առեւանգումները գնալով նոր կերպարանք էին ստանում: Քրդերը զգալով տեղական իշխանութիւնների համակրանքը, աւելի սանձարձակ էին դառնում: Կարինի գիւղերից մէկում քրդերը սպանելով մի հայի, անդամ առ անդամ կտրատում են ու յայտարարում «Ահա մենք կը սպանենք զի՞ն եւ թող կեաւուրներու թագաւորն զայ զի՞ն ազատէ եւ քրիստոնեաների ազատութեան համար պատերազմներ անէ»²⁹:

Մահմետական սանձարձակ ամբոխը առանց վախի ու պատասխանատուութեան, օրը ցերեկով էր կատարում իր սեւ գործը: Կարինում այդպէս սպանուեցին ի. Բաստուրմաճեանը եւ մէկ այլ երիտասարդ, որի «որակը ժողովուրդը չէր թոյլատրում հողին յանձնել, մինչեւ չպատժուէին յայտնի յանցագործները»: Հայերը մտադրութիւն են ունեցել զմռսել դիակը եւ ուղարկել Անգլիա, «իբրև մի նոր ապացոյց խոստացած բարենորոգութիւններու գործադրութեան»³⁰:

Ինչ բարենորոգումների մասին էր խօսքը, երբ «Թէ Թուրքիայի, եւ թէ Անգլիայի համար հայերը եւ Հայաստանը աչքի փուշ են դարձել: Նրանց գաղտնի դաշնագրութիւնը նրա մէջն էր կայանում, որ հայերին ոչնչացնեն Հայաստանի մէջ, ախորեն հայերին Հայաստանից»³¹:

Դատարանը՝ սուլթանի հլու կամակատարը, ոչ միայն չէր պատժում քրդերին ու թուրքերին, այլև արդարացնում էր: Այդպիսի մի դէպք էլ տեղի է ունենում կարինի Վարդենիս գիւղում, երբ աղջիկ առեւանգելու համար յարձակուող քրդերին դիմադրելու ժամանակ սպանում է երկու քուրդ, մէկ հայ: 17 հայեր ստանում են տասնհինգ տարուայ բանտարկութիւն, իսկ քրդերը... ազատում են³²:

28 ՊԱՐՈՒՆԵԱՆ, Յ., ԵՂԺ, ԽԱ. Դ., 307:

29 Մշակ, 1879, N 7:

30 Անդ, N 13:

31 Մշակ, 1879, N 6:

32 ՄԱԿ-ԿՈԼՅ, Կ. Մ., 62. աշխ., 169-170:

Արեւմտահայութեան կեանքը հարուստ էր նաեւ այնպիսի դէպքերով, երբ աւազակ քուրդը ու թուրքը թալանելուց, սպանելուց յետոյ, դրանով չբաւարարուելով, ժողովրդին բռնի կրօնափոխում էին, պղծում եկեղեցիները, վանքերը: Քրդերը Դերջանի Մանչ գեօղի եկեղեցին կողոպտելուց յետոյ դռան ճակատից կախում են սատկած շուն³³:

Աւելին, քրդերը խարելով քահանայի տղային, նրանից վերցնում են նշխարք եւ տալիս շանը³⁴:

Քրդերը նման ձեւով են վարուել նաեւ մէկ այլ գիւղում³⁵, իսկ սուրբ Յովհաննու վանքից կողոպտում են եկեղեցու զարդերը, նկարները, 3272 արծաթեայ դրամ³⁶:

Մէկ այլ դէպքում քրդերը եկեղեցի են մտնում ժամասացութեան պահին եւ վարդապետի ձեռքից խլելով նշխարքը, տանում կապում են իրենց շան պոչից³⁷:

Հայ ժողովրդի քաղաքական անապահով վիճակի մասին է խօսում Յ. Պարոնեանի այն վկայութիւնը, որ յայտնում է մի հայի նկատմամբ կարսից գաղթող թուրքերի դաժանութեան մասին.

«Տես, այս մեծ յանցանքն է, ուամազանի օրով թուրքի մազնեաց ուտել ... ոնիր ... կախուելու էր այդ թշուառականը այս աններելի յանցանքը մ'է, մանաւանդ տանկաստանուոց համար, որ անօթութեան դիմանալոյ բաւական վարժութիւն ունինք»³⁸:

Սկսելով քաղաքական հալածանքը, սուլթանը մտադիր էր հայ ժողովրդի մէջ մեղնել ազգային գիտակցութիւնը, մոռացնել տալ Հայաստան անունը:

Սկսուած հալածանքների առաջին զոհերից մէկը՝ Մ. Նալբանդեանի բարեկամ նշանաւոր բժիշկ Յ. Քեաթիպեանն էր: Կառավարութիւնը արգելում է ոչ միայն հետաքննութիւնը, այլեւ հետապնդում է նրանց, ովքեր փորձում էին բացայացել սպանութեան հանգամանքները, որի արիւնոտ ճանապարհը տանում էր Բարձր Դուռ:

33 Մշակ, 1880, N 5:

34 Դիւամ Հայոց Պատմութեան, հ. ԺԳ., Թիֆլիս, 1915, 86:

35 Ա.Աղ, 88:

36 Ա.Աղ, 120:

37 Ա.Աղ, 124:

38 Յ. ՊԱՐՈՆԵԱՆ, ԵՂՔ, ԽԱ. Դ., 311:

Սուլթանը արգելում է նաեւ վ. Մամիկոնեանի, հայ ժողովրդի հերոսական պայքարի դրուագները ներկայացնող նկարների ցուցադրումն ու վաճառքը, Հայաստանի անցեալը, պատմական վայրերի աւերակները ամփոփող լուսանկարների օգտագործումը:

«Աւերկամ Հայաստանի կառավարութեան կողմէն ամէն օր կ'փնտռուին, ինչպէս նաեւ այն ամէն գրքերն, որոնց մէջ Հայաստան բառը կը գտնուի: Ամէն օր կը ձերքակալուին եւ կրանտարկուին Հայկայ եւ Վարդանայ պատկերներն...»³⁹:

Հայկական դպրոցներում արգելում է մարմնամարզութիւնը, որովհետեւ այն աշակերտների մէջ ուազմատենչ ոգի է ծնում, հայ ժողովրդի պատմութիւնը, որովհետեւ այն աշակերտների մէջ տարածում է ազգային գաղափարներ եւ այլն:

Կարինից ուղարկուած թղթակցութիւններից մէկում Հայկակը խօսելով գործադրուող հալածանքների մասին, գրում էր. «...Միայն սա գիտենք, թէ ոստիկանութեան պաշտօնեաներ եւրեւակայական երկիւղներով կը մոլեգնի եւ կարծէ, թէ Հայկի եւ Վարդանի պատկերներն են հայկական հարցի պատճառները եւ անխնայ կը հալածէ զանոնք ուր որ տեսնէ: Գրավաճառներն կը ձերքակալուին եւ խիստ հարցանենութեանց կ'ենթարկուին: Այդ անմեղ պատկերներն 25 տարիէ ամէն տեղ կախուած են եւ ոչ ոք կը մտածէր յեղափոխական գաղափար մը ընծայել նոցա»⁴⁰:

Դեռեւ 1876ին, օսմանեան սահմանադրութեան տարում, սկիզբ էր գրուել քաղաքական հալածանքին: Նոյն թուականին Գալաթասարայի լիցէից հեռացւում են 95 ոչ մուսուլմանական ծագում ունեցող աշակերտներ, թէեւ լիցէի կանոնադրութեամբ քրիստոնեաները եւս իրաւունք ունէին սովորելու այդ հաստատութիւնում:

1890ին կարինից յայտնում էին, որ թուրքական իշխանութիւնները արգելել են կաթոլիկ դպրոցում, որի տնօրէնները ֆրանսիացիներ էին, աշխարհագրական ատլասների օգտագործումը, որովհետեւ «Փոքր Ասիայի քարտեզները պարունակում էին նաեւ Հայաստանի նահանգներն...»⁴¹:

39 Փարոս Հայաստամի, 1880, N 4:

40 Մշակ, 1880, 216:

41 ՄԱԿ-ԿՕԼՅ Կ. Մ., 62. աշխ., 176:

Նոյն հեղինակը նկարագրում է մի դէպք եւս, երբ ձերբակալում է մի ռուսահայ երիտասարդ այն բանի համար, որ նրա մօտ գտնում են թուղթ, որի վրայ գրուած էին այն գիւղերի անունները, որտեղով անցել էր նա իր ճանապարհորդութեան ժամանակ:⁴²

Շարունակուող քաղաքական հալածանքի պատկերաւոր արտայայտութիւնն է Ա. Արփիարեանի «Կարմիր Ժամուց» վիպակը: Աղօթքի ուսուցման ժամանակ «ազանութիւն եղարց մերոց գերելոց», «քագաւորաց քրիստոնէից» բառերի փոխարէն քահանան երիխաններին սովորեցնում է հետեւեալ արտայայտութիւնը. «Սա «ա»ն բերենէդ կամացովկ մը կը համես հազարով մը: Մարդ ենք, հազերնիս կը բռնէ. ան ա մեղք չէ եա. «զատ»ը կ'ուտես. կ'ուտես, տէր-տէր, կ'ուտես չէ նէ ան մեզի կ'ուտէ: «Եղբարց մերոցին» հազդ մի ֆիշ կ'անցնի: «Գերելոցին»՝ վրայէն, լրիուտելով»⁴³:

Թուրքական խաւարամոլ իրաւակարգում, ուր բառերն ու արտայայտութիւններն անդամ բռնադատւում էին, ուր օրէնքը ուժն էր, իսկ բանականութեան ու մտաւոր զարգացման մակարդակը թալանի, սպանութեան հաշիւը պահելը, պարզ է որ հալածանքի էր ենթարկելու քաղաքակիրթ ամէն մի ժողովուրդ: Աւելին, քանի որ թուրքերը ընդունակ չէին անդամ իրացնելու կամ ընդօրինակելու հպատակ ժողովուրդների առաջաւոր մշակոյթը, ձգտում էին աւերածութեան, հարստահարման ճանապարհով իրականացնել պատմութեան մէջ չլսուած մի քաղաքականութիւն՝ հպատակ ժողովուրդների բարձր մշակոյթը գնահատելով իջեցնել, հաւասարեցնել իրենց ցածր մակարդակին: Այսինքն՝ Զ. Աղայեանի խօսքերով ասած՝ «դժոխի մէջ հնարաւոր է արդիօք բռնակալի մէջ գութ ու խնամք փնտոել ու գտնել քաղաքակրթութեան եւ լուսաւորութեան հետքն ու արդիւնքը»⁴⁴:

Ի. Դարի 80ական թուականներին նոր ուժով բռնկած հայածանքները սահմանազատում մտցրին հայ հասարակական խաւերի մէջ: Պոլսահայ մեծահարուստները կողմնորոշուեցին դէպի սուլթանը, պնդելով այն միտքը, թէ հնարաւոր չէ հայ ժողովրդին դուրս բերել նրա ճիրաններից, ուստի անմտութիւն է հայ

42 Անդ, 170:

43 ՍՏԵՓԱՆԵԱՆ, Գ., Ա. Արփիարեան, Երեւան, 1955, 239:

44 ԱՂԱՅԵԱՆ, Ղ., Մի երես մեր նորագոյմ պատմութիւնից, Մոսկով 1881, 3-4:

քսակատէրերի կարողութիւնը վտանգի տակ դնելը։ Անհրաժեշտ
է խոհեմութիւն ցուցաբերելով վանել թուրքական մոլեռանդու-
թիւնը։ Անկումային տրամադրութիւն էին ապրում նաեւ մանր
ու միջին կարողութիւն ունեցողներն ու մտաւորականութեան ո-
րոշ ներկայացուցիչներ, որոնք ազգի ապագայի նկատմամբ հա-
ւատը կորցնելով, սարսափում էին ներկայից։

Ահա այսպիսի վիճակում էր Արեւմտեան Հայաստանը, երբ
Տաճկաստան դժոխքից փրկուելու ուրիշ ելք չտեսնելով, կարի-
նահայութիւնը եւս բռնեց գաղթի ճանապարհը։

Է. Ռեկիւի տուեալներով, 1878-1881 թուականներին Թուր-
քիայից գաղթել են 87760 քրիստոնեայ։ Ռուսաստանից Թուրքիա
են ներգաղթել 21390 մահմետական⁴⁵։

ՅՈՎՀԱՆՆԻՍ ԶԱՏԻԿԵԱՆ

45 ՌԵԿԹՈՒ, է., Լագիստան, Հայաստան և Քոչստան, Վաղարշապատ 1893,
24:

Summary

THE CONSEQUENCES OF THE RUSSIAN-TURKISH WAR 1877-1878 ON THE ARMENIAN CAUSE AND THE REGION OF KARIN

HOVHANNES ZATIKYAN

The second half of the 19th century's most important event in the history of Western Armenians was the Russian-Turkish War of 1877-1878. Although it ended in Russian victory, the Armenian Question did not achieve a lasting resolution. Article 16 of the Treaty of San Stefano and Article 61 of the Treaty of Berlin remained unfulfilled.

The repressive Ottoman Turkish regime took advantage of the conflicting points of view of the Great Powers and began a period of major pogroms that were aimed at assimilating Western Armenians and forcing them to emigrate. As a result, the lands conquered by them would end up with a majority population of Turkish tribes.